





# ԺԱՄԱՆԱԿՈՎ ԿՆՔ

## Խորհրդածություններ ցուցահանդեսից հետո

**Շուրջ երեք տասնամյակ է, ինչ Ռուդոլֆ Խաչատրյանն ամենից ավելի մասնակցություն վայելող հայ կերպարվեստագետներից է: Նրա արվեստի մատչելիությունը ամենաճանապարհային կարծիքների անդիր է տալիս՝ ինքնամոռաց հիացումից մինչև կտրուկ ժխտում: Այնուամենայնիվ, հիասթափ արդեն թղթած նկարիչը լի է համառով և վստահությամբ է նայում իր արվեստի ապագային:**

Արվեստում Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծած աշխարհը բեվեռայնորեն տարբեր է իմից, բայց գեղեցիկի ու կատարելության նկատմամբ ծարավը, որ կա ամեն մի մարդու մեջ, ինձ մերձեցնում է այդ աշխարհին և դարձնում նրա բնակիչը:

Իր միջավայրի աչքքան մանրամասն և աչքքան բանաստեղծական դիմանկարի ստեղծումը, դրանով իսկ ժամանակի ավերիչ ուժից նրա գեղեցկության պահպանումը գրեթե բոլոր արվեստագետների առաջնային գործն է, և դա Ռուդոլֆ Խաչատրյանն իրականացնում է բարոյական ու հոգևոր ուժերի բացառիկ սևեռմամբ:

Խաչատրյան նկարչի տեսակն իսկապես եզակի երևույթ է հայ, և ինչո՞ւ միայն հայ, կերպարվեստի մեջ: Նա չունի իր նախորդը, չունի նաև հետնորդները: Նա իր արվեստի ստեղծողն է և միակ կատարողը: Գուցե դա նախ նրանից է, որ այն սիմֆոնիան, ինչ ստեղծել է նկարիչը, հրաշալի ու համոզիչ է հնչում միայն վիրտուոզ կատարման դեպքում: Եվ իսկապես էլ, նրան նմանակողները մնում են բնության լոկ պասիվ ընդօրինակության սահմաններում՝ չհասնելով արվեստի հրաշքին: Առաջին հայացքից թըվում է, թե Խաչատրյանը դուրս է ավանդական, ազգային կերպարվեստի սահմաններից, բայց և ուրիշ որևէ դպրոցի արվեստում չի տեղավորվում: Հանգի աշխարհի, մարդու նկատմամբ վերաբերմունքի, գեղեցիկի, բարու նրա պատկերացման մեջ, գեղագետի նրա խղճի ծալքերում երևակվում է հայ գեղագետն ու նկարիչը:

Խաչատրյան նկարիչը նույնքան եզակի է նաև իր ճակատագրով: Որքան տաղանդավոր, նույնքան էլ հաջողակ, նա երբեք չի զբաղվել ինքնախաբեությամբ, ժամանակը չի վատնել ավելորդ զբաղմունքների վրա, սիրահարված իր գործին՝ աշխատել է ու աշխատել: Եվ այսօր էլ պրոֆեսիոնալ նկարչի ամենօրյա տքնանքը մոսկովյան հրաշալի արվեստանոցում (վերածննդի վարպետների աշխատանոցները հիշեցնող), նրա կյանքն իր տանը կամ հյուրանոցներում՝ լինի դա հայրենի Երևանում, թե ուրիշ մի տեղ (Փարիզ, Լոս Անջելես և այլն) նրան երբեք չի լքում իրեն նկարիչ զգալու կարողությունը, ինչ նա ամեն րոպե պատրաստ է ապացուցելու սովորական մատիտի և թղթի միջոցով:

...Առաջին հանդիպումս Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստի հետ տեղի է ունեցել շատ վաղուց, մի բացիկի միջոցով, որը պատկերում էր նկարչի «Ռուս. Գրողուհի» աշխատանքը՝ 1959 թվականին Վիեննայում արժանացած բրոնզե մեդալի: Բրոնզե մեդալը պատանու իմ մտքում կամրացել էր Խաչատրյանի նկարչին, և ես, բնականաբար, փնտրում էի նրա ուրիշ ստեղծագործությունները ևս: Այսպես, մի մութ, ամպամած առավոտ (լավ հիշում եմ, Հայաստանի պետական պատկերասրահի լույսերը վառ էին) դեմ առ դեմ հանդիպեցի նրա «Ամբոխները խելագարված» մեծադիր գծանկարչական աշխատանքին, և չնայած այն ժամանակներում ընդունված նրբակային, որ կար նկարի մեջ, այն ինձ հետապնդիր թվաց, հատկապես կասկածամտի իր թափով:

Կերպարվեստում վաղահասակ լինելը հազվագյուտ բան է, սովորաբար նկարչի վաղ շրջանի քննումները առավել հատուկ են բանաստեղծներին, բայց երբ նկարչության մեջ, դեռ պատանեկան հասակում դրսևորվում է վարպետ նկարելու ձիր հետ, այդ արդեն չի կարելի տեղավորել սովորական երևույթի սահմաններում:

Եվ մեր իսկ կողմից **աստվածատուր** հրաշալի բառը (փոխարինված **բնատուր** բառով, որ դարձյալ նույն միտքն ու իմաստն է արտահայտում) լիովին կարելի է վերագրել Ռուդոլֆ Խաչատրյանին:

Այնուհանդերձ, ինչպես ամեն մի իսկական նկարչի, այնպես էլ Ռուդոլֆ Խաչատրյանի կյանքում ամեն ինչ հարթ չի ընթացել, ինչպես կարող է թվալ կողքից: Արվեստում հեշտ չէ բազում գայթակղությունների մեջ սահմանափակել ինքդ քեզ մի որոշակի տեսակի, ինքնարտահայտման մի ձևի մեջ: Եղավ մի շրջան, երբ Ռուդոլֆը ցուցահանդեսներին մասնակցում էր հիմնականում գեղանկարչական գործերով, որոնք հիշեցնում էին իր ուսուցչի՝ Երվանդ Քոչարի արվեստը: Բայց օժտված լինելով լրջմիտ արվեստագետին հատուկ ներքին տեսողությամբ, նա ճիշտ գնահատեց իր ստեղծագործության ուղղվածությունը և վերադարձավ նրան, ինչով սկսել էր ընդմիշտ հրաժեշտ տալով գեղանկարչությանը, հետագայում այդ բարդ արվեստի խնդիրները համարձակորեն տեղափոխելով և հաջողությամբ իրականացնելով գրաֆիկայի մեջ: Եվ երբ մի օր, իր արվեստանոցում, զրույցի մեջ, անսպասելիորեն խոստովանեց, թե սովորական մատիտով կամ սեպիայով ցանկանում է պատ-

~~[illegible]~~

# ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

ՀՍՍՀ պետկինոյում մշակվել կդրվեն երկրի տարբեր ստու-

# ՆՈՐՈՒՅԹ

